ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՏԱՆՈՒՑՈՒՄ
(փոքր առաջադրանքներ)

Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր (ՈՀԲԾ)
ՎԶՄԲ փոխառության No.8267AM

Պայմանագիր՝ **«Բաղրամյան-Նորակերտի ինքնահոս ոռոգման համակարգի ներտնտեսային ցանցի նախագծում և հեղինակային հսկողություն» ISEP/CQS/SW-16/002**

Պայմանագիրը շնորհված ընկերություն՝ **«ՀԳՇՆ» ՍՊԸ (ՀՀ)** *համատեղ «Էկոնոմ Էկո» ՍՊԸ-ի հետ (ենթա-խորհրդատու, ՀՀ)*

Հասցե. **ՀՀ, ք.Երևան 0028, Կիևյան 16**

Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ **2017թ. հունիսի 12**

Գնման/ընտրության մեթոդը՝ **"Խորհրդատուների Որակի վրա Հիմնված Ընտրության (CQS)"**

Պայմանագրի Գինը՝ **25,993,200.00 ՀՀ դրամ (23,856,000 ՀՀԴ՝ I և II-րդ Փուլերի համար և 2,137,200 ՀՀԴ՝ III-րդ Փուլի համար), ներառյալ ԱԱՀ:**

Պայմանագրի տևողություն. Փուլ I և II՝ **3.5 (երեք ու կես) ամիս** է ծառայությունների մեկնարկից հետո; Փուլ III՝ հեղինակային հսկողության պայմանագրի նախատեսվող տևողությունը 8 (ութ) ամիս է, որը նախատեսվում է սկսել 2017թ. նոյեմբերից:

Պայմանագրի շրջանակները.

- **I Փուլ՝** Բաղրամյան և Նորակերտ համայնքների կաթիլային կամ անձրևացման ներտնտեսային ոռոգման համակարգերի շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորում, այդ թվում ճարտարագիտական հետազոտություններ, նախնական նախագծի պատրաստում, ներտնտեսային ոռոգման համակարգերում ընդգրկվող և հարակից տարածքների նախնական սոցիալական և բնապահպանական հետազոտությունների վերլուծություններ: Նախնական հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները պետք է ներկայացվեն Վերջնական բնապահպանական և սոցիալական հետազոտությունների հաշվետվությունում:
- **II Փուլ՝** Մանրամասն նախագիծ, տեխնիկական մասնագրեր, վերջնական առանձին ԲՍԿՊ-ի և ՄՊ-ի նախագիծ, որոնք պետք է ներառեն ներտնտեսային ոռոգման ցանցերի տարածքների ուսումնասիրության արդյունքները: Բացի դա Խորհրդատուն պետք է կազմի նաև ՎԳՊ (անհրաժեշտության դեպքում): Հարցումների միջոցով ներդրումների համապատասխանության և նախագծում շահառուների ներգրավվածության և որոշումների կայացման վրա նրանց ազդեցության վերջնական գնահատում:
- **Փուլ III՝** Հեղինակային հսկողություն շինարարության ընթացքում: Շինարարության փուլում, Խորհրդատուն, ի թիվս այլ հարցերի, պետք է շինարարական աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողություն իրականացնի առանձին ԲՍԿՊ-ով և ՄՊ-ով նախատեսված բնապահպանական և սոցիալական պահանջների պահպանման և մեղմացնող միջոցառումների իրականացման նկատմամբ: